ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

23 հուլիսի 2021 թվականի թիվ 217 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 245-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն, 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 245-Ն որոշումները և ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի զեկուցագիրը՝

ո ր ո շ ում ե մ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 245-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 536371.0 հազար դրամ գումարից 24685,657 հազար դրամը փոխանցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, իսկ 10833,976 հազար դրամը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ 2021 թվականի հունիս ամսվա ընթացքում սահմանամերձ համայնքների էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչ-բաժանորդների կողմից սպառված էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա. Գևորգյանին՝ ապահովել որոշման կատարումը:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

23.07.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ք. Իջևան
23 հուլիսի 2021թ.